

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուլբուլ, կէս տարեկանը 6 բուլբուլ, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакеъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Նմանազրույթները բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւններ ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւններին համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ. Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԵՐԵՎԱՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին քահանաների մայիսի 31-ի արկածը. Մամուլ. Երևանի գեղարքը մայիսի 23-ից մինչև 25-ը. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՎԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի քանի ժամանակ առաջ լուրեր տարածվեցին, որ Ալեքսանդրօպօլի գաւառի զանազան ծայրերում սպասվում են բարդութիւններ, օրինակ Արագածի, Դարախաչի, Աղբաբայի սահմաններում:

Արագածի, այնտեղ ծագեցին թիւրքիս-ցուլիւններ, որոնք ցրվեցին և հեռացվեցին չորսիւ թէ գաւառապետի աշաւուրը հակողութեան և թէ տեղական հայ ազգաբնակչութեան ղեկավար մասի խեղացի գործունէութեան:

Արագածի շրջանի ոստիկան Սարգիս ղեկուցել էր գաւառապետին, որ թուրք-Գեօղաղարայի բնակիչները երկուդի մէջ են շրջակայ հայ գիւղացիներին սպառնալիքներէ և կարօտ են անմիջական պաշտպանութեան: Գաւառապետը ստանալով այդ տեղեկութիւնը, անմիջապէս ուղևորվում է դէպի վտանգված տեղը: Սակայն հարց ու փորձերը ցոյց են տալիս, որ ոստիկանի ղեկուցումը բոլորովին անհիմն է, թուրքերը յայտնում են, որ նրանք գոհ են իրանց հարեան հայերից և ոչ մի սպառնալիք չեն լսել նրանցից: Գաւառապետը անմիջապէս հեռացնում է ոստիկանին և իր կողմից յորդորում ավագաբնակչութեանը զգուշութեամբ վերաբերվել լուրերին և վտանգաւոր սխալների մէջ չընկնել:

Մի և նոյն ժամանակ գաւառապետը տեղեկութիւն է ստանում Աղբաբայի մասին զինաւորից, որ իւր թէ Ալեքսանդրօպօլի գաւառի այն սահմանում, որ սահմանակից է Ախալքալաքի գաւառին և Կարսի շրջանին, ժողովված են զինված հայերի խմբեր յարձակում գործելու Կարսի նահանգի թուրքերի վրա: Գաւառապետը ընկնում է նշանակում և պարզում է, որ ոչ մի այդպիսի բան տեղի չէ ունեցել իր գաւառում, իսկ ընդհանրապէս Կարսի գաւառի սահմանում մի քանի թուրքեր յարձակում են գործել հայերի վրա, որի մասին նա ինքը կարծի է համարում ղեկուցանել Աղբաբայի մասին զինաւորին, առաջարկելով ձեռնարկել խիստ միջոցներ բարդութիւնների առաջն առնելու համար:

Երրորդ գէպը, որ բարդութիւններ էր սպառնում Ալեքսանդրօպօլի գաւառին, դա մի քանի ազգեցիկ թուրքերի ընտանիքների հեռանալն է լինում քաղաքից, որով առիթ է տրվում մահմեդական գիւղերին ենթադրել թէ յիւրակ իրական վտանգներ կան ալեքսանդրօպօլիների կողմից: Գաղաքի հայերը, տեղեկանալով այդ մասին, անմիջական միջոցներ են ձեռք առնում, մարդիկ ուղարկում հասկացնելու թուրքերին, որ հայերի կողմից ոչ մի յարձակում երբեք տեղի ունենալ չէ կարող և վերադարձնում են գաղթող ընտանիքները: Թուրքերը, որոնք արդէն պատրաստվում են եղել գիւղացիներին ցոյց տալու, հանգստանում են և քաշվում իրանց գիւղերը ու լեռները:

Մեր երևանի թղթակից Ա.—Դ. գրում է յունիսի 7-ից.

Թուրք խուժանի յարձակման ենթարկվեց նաև Դարախաչազը, որի մասին առաջ կը բերեց մի քանի մանրամասնութիւններ, քաղելով այդ եկոյնների պատմածներէ:

Նախիջևանի և նրա շրջակայ գիւղերի աւերն ու կողոպուտը աւելի շատ, քան կարելի էր սպասել, զրգոցեց, թուրք խուժանի խորթակը, որը աւելի ու աւելի ընդարձակելով իր խուժանների ասպարէզը, արշաւեց նոյն իսկ Դարախաչազի — այդ քաղ գաւառաւասի վրա:

Երբ խուժանները կենտրոնը կազմում է Նախիջևանի գաւառի Իթղուան գիւղը, որը մի առանձին հակում ունենալով աւազակութիւնների՝ մեծ դեր է կատարել Նախիջևանի գիւղերի կոտորածի ու կողոպուտի մէջ:

Նախիջևանի գէպերից յետոյ Լուխ, Բզում, Գեօղաղար, Զաթմա և այլ թուրք գիւղերից մի խումբ, իրան առաջնորդ ունենալով Իթղուանի թուրքերին, մայիսի 15-ին յարձակվում է Դարախաչազի սահմանի վրա գտնվող Սուլթան-բէկ 89 տուն ունեցող գիւղի վրա և թալանելուց յետոյ այրում գիւղը: Անսպասելի յարձակումը հնարաւորութիւն չէ տալիս ուժեղ դիմադրութիւն ցոյց տալու: Նոյն խուժանը արագ յարձակվում է դարձեալ սահմանի վրա եղող Սեւ գիւղի վրա, 51 տուն, և թալանում: Սուլթան-բէկի և Սեւի ժողովուրդը քաշվում է Մարտիրոս մեծ գիւղը (125 տ.): խուժանը շարունակում է առաջ գնալ և հասնելով Մարտիրոսի սահմաններին, քրջում է 700 գլուխ ոչխար, սակայն այնտեղ տեղի է ունենում մի փոքր ուժեղ դիմադրութիւն և յետ խլվում ոչխարի կէս մասը: Այդ խուժանի մի մասը աւերի և առաջ գնալով պաշարում է 38 տուն ունեցող Արաբու գիւղը, սակայն որը իր դիմադրութեան շնորհիւ կարողանում է 18 օր շարունակ պաշարված մնալ, մինչև որ տեղի է ունենում մի ուժեղ հակադարձակում հայերի կողմից: Արաբու գիւղի այդ պաշարման ժամանակ թուրքերից սպանվում են մօտ 20 հոգի:

Մի քանի օրվայ ընդմիջումից յետոյ Իթղուան ստանում է անպատկանելի մի նոր ոյժ, այս անգամ Դարախաչազի, Գէօղաղ, Զուլ և Ախաղ գիւղերից, ինչպէս և Դարախաչազի հիւսիսային կողմի գիւղերից, ուր տարվել են բաւականաչափ աւարներ և ուր այժմ կան վերաւոր մարդիկ: Այդ նոր ստուգարացած խուժանը, յարձակվելով Մարտիրոս գիւղի վրա երրորդ անգամ, տանում է ոչխար, իսկ այնտեղից էլ խուժում է 77 տ. ունեցող Փաշալան գիւղի վրա և քրջում նախիրը: խուժանը գնալով երես է առնում և առաջ ու առաջ խուժում: Արդէն յունիսի 1—2-ին յարձակվում է 49 տ. ունեցող Աեւր գիւղի և Գէօղաղ-Գեօղաղի վրա (154 տ.): Այս տեղերում լինում են ընդհանրութիւններ, ուր սպանվում է մէկ հայ: Աեւրցիք և Զէօղաղ-Զեօղաղցիք ստիպված են լինում քաշվել 164 տ. ունեցող Մալիշ-կա մեծ գիւղը: Այս անգամ խուժանը այլ ևս առաջ գնալ չէ կարողանում: Մարտիրոս և Մալիշ-կա գիւղերում խմբված ժողովուրդից կազմվում է մի զինված խումբ, Աւագ և Մկրտիչ անուններով երիտասարդների ղեկավարութեամբ, որը յարձակվելով նախ քրջում է մինչև այդ Արաբու և Փաշալան գիւղերը պաշարող խուժանը և ապա արշաւելով թալանի ու կողոպուտների կենտրոն կազմող Իթղուանի վրա, տալիս է մի ջարդ: Տեսնելով խուժանը հայ քաշերի արշաւանքը ցրվել է ընկնում մեծ կոտորածներով: Պատմում են որ 150-ի չափ սպանվածներ են լինում այդ գիւղի մէջ: Գիւղը բոլորովին դատարկվում է. հայերը այդ գիւղում գտնում են իրանց աւարից շատ բաներ: Տաւանակ և աւելի գիւղեր թալանող, աւերող և հազարաւոր մարդիկ

անբաղադրող Իթղուանը նոյնպէս աւերվում է և հրդեհվում:

Այս հակադարձակումից յետոյ այդ շրջանը մի փոքր հանգստացել է, բայց աւելի, որ խաղաղութիւնը վերականգնվել է, չէ կարելի, որովհետեւ թուրք խուժանի և ամբողջ հոգեբանութիւնն է գլուխ խոնարհեցնել այնտեղ, ուր փոքր ի շատէ ուժ է տեսնում և երես է առնում, ուր բացարձակ մեծամասնութիւն է կազմում ինքը, և իւրաքանչիւր օր կարելի է սպասել խուժանների, հէնց որ նա — թուրք խուժանը — որ և է տեղից նոր ուժ ստանայ, իսկ այդպիսի տեղեր, որքան կուզէք մեր երկրի վայրերի խորդութիւններին մէջ:

Ստացանք հետեւեալ հեռագիրը.

Երևան, 9 յունիսի, երեկոյան 8 ժ. 12 ր.

«Յունիսի 6-ին շրջակայ գիւղերի թուրքերից և պարսկական քրդերից մի խումբ, գլուխ ունենալով իրանց մի մօլա, յարձակվեցին Բիւրալու հայ գիւղի վրա, Երևանի գաւառում: Ձիւղները քրջեցին տարան հօտը, հետեւեցին ուղղում էին կողոպուտի գիւղը: Սկսվեց հրաձգութիւն: Վրա հասաւ տեղական պրիստար ստորաֆիլիներով և զրազունների մի զօրամասով: Հօտը յետ խլվեց: Գիւղն ազատվեց: Սպանված են 2 հայ և 40-ի չափ թուրք ու քրդեր: Բռնված են առաջնորդող մօլան և մի թուրք»:

Լեռն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՐԱՅԻ ԲԱՆԱՆԱՆԵՐԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԱՐԿԱՅԸ (Գաղտնիական)

Մայիսի 31-ին պրաւալանի սեմինարիաւում և նրա շուրջը լուրացի քահանաների հետ պատահած դէպքը ընկնելու համար Կովկասի փոխարքայի հրամանով կազմված յանձնաժողովը, (որի մասին արդէն գրված է «Մշակ»-ում) ներկայացրել է մի ղեկուցում, որի մասին «ԲԱՅԱՅ»-ում կարդում ենք:

«Այդ ղեկուցումն մէջ յանձնաժողովը, ի միջի այլոց, հաստատում է, որ հոգեւորականութեան ընդհանուր ժողովի մայիսի 31-ի նիստի ժամանակ սեմինարիաւ են մտել շատ կողմնակի անձներ, որոնք ժողովի մէջ մտցրել են անհանգիստ տրամադրութիւն և անկարգութիւն, որի պատճառով էլ նախագահը անհրաժեշտ համարեց փակել նիստը: Նախագահի հետաւելուց յետոյ, կողմնակի անձները մէկը նախկին սեմինարիաւ, սկսեց ճառ տալ, բայց ներկայ եղող հոգեւորականները ստիպեցին նրան լռել: Այդ առիթով աղմուկ բարձրացաւ, որը դէպի սեմինարիաւ գրաւեց անգլիսի հասարակութիւն: Ստուակայ գործողօյը հեռախօսով իմաց տուեց III քաղաքամասի պրիստարին, որն անյապաղ եկաւ և, հայր-տանի հրաւերով, գնաց նրա ընտանիքին իր սպասարէին հետ: Այնտեղ, երկու քահանայի ներկայութեամբ, հայր-տանուէր հաղորդեց Նաբիբէկովին, որ ժողովի նիստերը շատ աղմկալի են, որ ներկայ են լինում շատ կողմնակի անձներ և որ այդ պատճառով նա անհանգիստանում է իրան յանձնված շէնքի ամբողջութեան և իր կեանքի համար, մանաւանդ որ իրան յայտնի է հաւաքված հոգեւորականութեան թշնամական վերաբերմունքը դէպի իր անձը և որ նա ստացել է սպառնական նամակներ՝ թէ նրան կը սպանեն և սեմինարիաւ օդը կը թոցնեն: Այդ պատճառով հայր-տանուէր խնդրեց պրիստար Նաբիբէկովին ետանդուն միջոցներ ձեռն առնել սեմինարիաւ մարմնու կողմնակի անձներէ: Բայց երբ կողմնակի անձներին հեռացնելու միջոցին նկատվեց, որ մի անձ, որը յետոյ ինչպէս երևաց՝ Ասատիւնի քահանայի որդին էր, շանք էր գործ գնում մի ատրճանակ տալ մի քահանայի և պրիստարին այդ ատրճանակը խլելով՝ բերեց հայր-տանի

ընտանիքին, տեսնել խնդրեց պ. Նաբիբէկովին սեմինարիայի շէնքն առնել իր պատասխանատուութեան տակ և մաքրել շէնքը հոգեւոր անձերից էլ: Այն ինչ քահանաներից և կողմնակի հասարակութիւնից բաղկացած ամբողջութիւն, որը լցնում էր Պուշկինի պարտիզակի և սեմինարիայի միջև եղած հրապարակը, յուզմունքն աճում էր: Այդ ժամանակ քաղվաճարայի մօտ սպանեցին մի գործողօյը, որի մասին ասում էին, որ կամ քահանան կամ նրա ուղեկիցն են սպանել: Իսկ քահանաներին լուր հասաւ, որ ապօրինաբար ձերբակալել են իրանց եղբայրակից մի քահանայի: Տարան նաև սպանված գործողօյը: Հրապարակը մաքրելու համար պրիստար Նաբիբէկովը բերել տուեց 10 կազակ, որոնց հետ, ինչպէս ենթադրում է յանձնաժողովը, միացել էին և քաղաքային ձիաւոր պահակները, և նրանք բոլորն սկսեցին ցրել ամբողջ, գործելով մարահներով, որի ժամանակ և ձեռքով էին ամբողջութիւն գտնվող մի քանի քահանաներ:

Հարց ու փորձի ենթարկված վկաների ցուցումներից պարզվեց, որ քահանաները, ապառքիւ համար, փախչում մտնում էին նկուղները, էլեքտրաբաշի վագոնները, Պուշկինեան փողոցի ճաշարանը, մի քանիսն էլ նրբից փախան մտան սեմինարիաւ, ուր խուժեցին և կողմնակի անձներ: Յանձնաժողովի հարց ու փորձ արած ֆլապած քահանաներից մէկը երեսի վրա մտնելի հարուածի հետքը դեռ մնում էր, միւսի գլխարկն է պատված մտրակով և ականջը վերաւորված: Մի քանիսն էլ ստացել են հարուածներ, բայց նրանցից հետքեր չեն մնացել:

Փողոցում աշխարհականների պրիստար խլեց 2 ատրճանակ և մի փամփուշտարան 60 փամփուշտով:

Սեմինարիայի շէնքը խուզարկելով, պրիստարը գտել է նրանում 12 կողմնակի անձեր, որոնցից շատերն արձակված սեմինարիաւսաններ էին: Որովհետեւ տեսնելով այդպիսի, որ շէնքը բոլորովին մաքրեն, նոյն իսկ էկզարխի թոյլատուութիւնով այնտեղ գեղեցիկ քահանաներից, այդ պատճառով պրիստարը գեղեցիկ ժամը 11-ին դիմեց ոստիկանապետին՝ հրահանգ խնդրելով՝ ոստիկանապետը եկաւ և գործը կանոնաւորեց: Սեմինարիայի շէնքի մէջ պահապաններ զրվեցին կազակներից և գեղեցիկ խաղաղ ու հանգստեւ անցաւ: (ԲԱՅԱՅ)

Մ Ա Մ Ո Ւ Լ

Նախիջևանի և Շարուրի դարձուրելի աղետները արձագանք չը գտան մայրաքաղաքի ուղևոր մամուլի մէջ: Տպվում են հեռագիրներ, տպվում են նկարազրույթներ, բայց կարծես դրանք այնքան սովորական, այնքան աննշան բաներ են, որ առանձին ուղարկութեան արժանի էլ չեն: Անս ևս իրականութեան մի կողմն էլ: Ի՞նչն էր պակասում ցնցելու, սարսափեցնելու համար: Արդեօք XX դարը, թէ թուրք խուժանի այն խուժութիւնն պիտի լինեն մանաւանդ մի բրիտանիայի մեծ պետութեան մէջ, հարկաւոր մարդկանց բռնի մահմեդականացնում, բրիտանական սրբաւայրերի պղծում, կանանց բռնաբարում, տասնեակ գիւղերի հրդեհում և ոչ մի խօսք չունեցաւ ասելու ուղևոր մամուլը, գոնէ մինչև այժմ այդպէս էր, եթէ չը հաշուեք մի քանի թղթակցութիւններ և յօդուածներ: Ի՞նչն է այս տարօրինակ լուրերն պատճառը: Եւ արդեօք կամաւոր է այդ լուրերը: Թողնենք այս հարցը: Նրան պարզել կարող է մօտազայ ժամանակի պատմութիւնը, ինչպէս պիտի պարզէ և շատ ու շատ ժամանակակից առեղծուածներ: Թողնենք այս, դիմենք մեր տնային փաստերին:

Թիֆլիսից մայրաքաղաքի լրագրներին ուղարկվում էին մասնաւոր հեռագիրներ, որոնց մէջ նկարագրվում էին դարձուրելի իրողու-

Թիւնները այնքան, որքան հնարաւոր է հեռագրի մէջ, այսինքն կիսատ-պատ, առանց երկար մանրամասնութիւններ: Այդ հեռագիրները մի քանիսն տակ դրված էր. երգուեալ հաւատարմատար պ. Սամսոն Յարութիւնեանի ստորագրութիւնը: Բագուի «Բաւի»-ն իսկոյն աղմուկ և աղաղակ բարձրացրեց. պ. Յարութիւնեանը տեղեկացիօզ տեղեկութիւններ է տալիս, նրա հեռագիրները բնկեցնող են և այլ այսպիսի ֆրագմէնտ: Ի՞նչ էր սա: Արդեօք պ. Թօփիլեանի օրգանը հաւատարմ էր մնում փետրվարին, Բագուի կոտորածից յետոյ, յայտնած իր այն սկզբունքին, թէ չը պէտք է ոչինչ գրել զազանային կոտորածներ ի մասին, արդեօք նա այժմ էլ հաւատացած է, թէ ամեն ինչ ծածկելը մեծ իմաստութիւն է նախ և առաջ արդարութեան տեսակէտից: Երբէք: «Կասպիականներ» մաքրակեղան «փօլիթիքան» բաւականաչափ յայտնի է մեր ընթերցողներին: Նոյն «փօլիթիքան» էլ արտայայտվեց Նախիջևանի գաղանութիւնների ժամանակ: Դանի որ Նախիջևանում և նրա գաւառում մասնագետներ խուժանը անպատիժ կոտորում էր, կրակում էր, չինգիզխանական բարբարոսութիւններ էր կատարում, «Կասպիականներ» լուռ ու մուռ էին ու բարեհոգութեամբ ապագում էին տեղեկութիւններ առանց նոյն իսկ իրանց սովորական կեղծաւոր բացակայութիւնների: Բայց ահա Երևանում և նրա գաւառում հայերը սկսեցին ցոյց տալ թուրքերին, որ իրանք ոչխարներ չեն, որ բոլորովին անաղիք չեն իրանց հլու խոնարհութեամբ մտաւորաւ ներթ տալ թուրքական գաղանութիւններին: Այդ ժամանակ «Կասպիականներ», մոռանալով իրանց բարեբաղձ սկզբունքը, աղմուկ բարձրացրին հայերի գաղանութիւնների մասին, նոյն իսկ հասան այն աստիճանին, որ յանդիմանական հեռագիր ուղարկեցին Երևանի քաղաքապետին պ. Մէլիք-Աղամալեանին, այն մարդուն, որ Նախիջևանում իր կեանքը վտանգէ էր ենթարկել կոտորածները կանգնեցնելու և երկու ազգերի մէջ հաշտութիւն գցելու համար: Պարզ չէ՞ «Կասպիականներ» լռելիքան: Լեւել, ծպուտ անգամ չը հանել Նախիջևանի անլուր բարբարոսութիւններին մասին և բղաւի հայերի «գաղանութիւններ» մասին... Եւ այդ մօնօլական լռելիքան հրապարակ է հանվում արդարութեան, հասարակական իդէալների դրօշակի տակ... Եւ պ. Յարութիւնեանը արդարացի կերպով ասում է «Կասպիականներին» իր նամակի մէջ, որ տպված է «Нов. Обозр.» լրագրում.

Չգտելով յայտնի դարձնել աշխարհին թէ գաղանութեան ինչ փաստեր են տեղի ունենում, ես կատարում էի իմ քաղաքացիական պարտքը հասարակութեան առաջ. կարծես զբոսով ես բոլորովին չեմ հակասել այն դերին, որ կատարել եմ իբրև Բագուի նախկին այն կամուրջի անդամ, որի նպատակն էր հաշտեցնել հայերին և մասնագետներին, որովհետեւ աշխատել եմ, այժմ էլ ձգտում եմ ստեղծել հաշտութիւն բանականութեան և ընդհանուր բարօրութեան հողի վրա, մի քարոզչութիւն, որ հնարաւոր է այն դէպքում, երբ խաղաղութիւն և բարե ղրացական յարաբերութիւններ կը պահանջվեն. բայց ես երբէք չեմ էլ մտածել համարել ինձ սպանողներին և թախտորդներին թաղանթով քննելութեան անդամ: Եթէ իմ թղթակցութիւնները ցասման և վրդովմունքի գրգռում են պատճառել ազնիւ հասարակութեան, կասկած չը կայ, որ այդ ցասումն ու վրդովմունքը ուղղված պիտի լինէին նրանց դէմ, որոնք սպանում են անմեղ մարդկանց, թախտում են նրանց կայքը, այրում են ամբողջ ընտանիքներ ծնողներ, երեխաների հետ, անպատու և կանանց, նոյնպէս և նրանց դէմ, որոնք զրգում են, սովորեցնում են և առհասարակ այդ չարագործութիւնների անհատ-պատճառների դէմ: Բայց չէ՞ որ ամբողջ մասնագետական հասարակութիւնը այսպիսի խմբերից չէ բաղկացած: Ես հիմք ունեմ ստեղծ և հաստատում եմ, որ մասնագետականները աշխատաւոր, քաղաքականութեանը չը զբաղվող և համարվածութեան ոգով չը վարակված դասակարգը հայերի չափ մնաւում է անմիտ կոտորածներից ու հրճարկութիւններից և ամօթից կարծում է իր հաւատարմիցներ խայտառակ արարքների համար: Տարբարակաբար, այդ դասակարգը, ինչպէս երևում է, անզօր է սանձարձակ զուհ հարկբանների և նրանց ղեկավարների դէմ:

Մամուլի իւրաքանչիւր ազնիւ օրգանի և հասարակական գործիչի պարտքն է աստակել արատները և մեղքացան հասարակական խոցերը:

Մի ազնիւ, գեղեցիկ դեր, որ երբէք չեն հասկանայ «Կասպիականները»: Թող չը հասկանան կամ չը հասկացող ձևանան: Նրանց կարճամարտէ հասարակական կարծիքը, առաջ

գնալով դէպի լոյս, դէպի դժոխային գործեր: Բացարձակ մեղքացումը: Արդէն շատ բան բացվել է և շատ բան էլ կը բացվի խուզարկու մաքր օգնութեամբ: Եւ «Բաւի»-ի էջերում նստած ազգականներ չեն, որ կարողանան իրանց կոտորածներով կանգնեցնել ճշմարտութիւն, լոյս որոնող միտքը...

ԵՐԵՎԱՆԻ ԴԵՊՅԵՐԸ ՄԱՅԻՍԻ 23-ԻՑ ՄԻՆՆՈՒՆԻ 25-Ը

(Տեղեկութիւններ, որ հաւաքել եմ ես Օրգան Սէմինի հետ միասին Երևանի դէպքերի մասին ուսու, հայ և թուրք ինտելիգենցիայի ներկայացուցիչներից):

Երևանի կեանքի շատ փաստեր ցոյց են տալիս, որ և այստեղ, որպէս և ուրիշ տեղերում, ընդհարումները հայերի և մասնագետականների միջև տեղի էին ունենում ոչ թէ կրօնական կամ տնտեսական, այլ քաղաքական հողի վրա: Հայերի թշնամութիւնը թուրքերի հետ ոչ թէ երկու ազգերի թշնամութիւն է, այլ երկու կուսակցութիւնների: Առաջադեմական կուսակցութիւնը կազմում են հայերը, որպէս աւելի կուստուրական տարր, և հատ հատ ինտելիգենտ մասնագետներն են: Իսկ մասնագետական մասսան յետագէմ, ագէտ տարր է, և կազմում է մի տեսակ «սև հարկբան»:

Ի հարկէ, «սև հարկբան» ներկայացուցիչները մօտ ցանկութիւն երկաց ազատվել իրանց ամենից աւելի ատելի անձերից: Ներքին, ի միջի այլոց, մահ էին սպանում ռուս ուսանող Ս—ին (նրա ազգանունը ինձ յայտնի է) և մի ուրիշ անձանցի, նոյնպէս ռուս ուսանողի: Եւ ի մասին ասում էին, որ նա ցոյց էր տուել ոստիկանութեանը այն տուճը, ուր պահվում էր թուրքերի դէմը: Բացի դրանից Ս—ն մասնաւոր ընդհարումներ էր ունեցել Գէնգէլիինսկու հետ: Սպանուիքից յետոյ Ս. հեռացաւ Երևանից:

Մայիսի սկզբին նկատուում է զօրեղ ագիտացիա մասնագետների միջև: Գալիս են թուրքեր Բագուից, հաւաքում են իրանց շուրջը մասնագետների խմբակներ, յուզված մի ինչ որ բանի մասին խօսում են նրանց հետ: Երևանի դէպքերից երկու շաբաթ առաջ երևում է ոտանաւոր թուրքերին լեզուով, նոյնպէս Բագուի ծագում ունեցող, որը գրգռում էր հայերի դէմ և կոչ էր անում ջնջել նրանց: Պրօվօկացիայի բնաւորութիւն ունէր գործակալական հեռագիրը (Գէնգէլիինսկու ուղարկած) գործերի դրութեան առիթով Երևանում Նախիջևանի դէպքերից յետոյ: Այդ հեռագիրն ասում էր, որ իբր թէ թուրքերը բոլոր ժամանակը աշխատում էին խաղաղութիւն պահպանել, բայց հայերը խախտեցին այդ խաղաղութիւնը: Մասնացոյց էր անվում, որ հայերը սպանել են մի մասնագետին: Այդպիսով, մասնագետականները մի յայտնի մասի մէջ աւելի և աւելի բորբոքվում էր թշնամական դժացմունքը դէպի հայերը, որ պատրաստ էր բռնկվել հէնց առաջին պատահած դէպքում: Մնում էր միայն կազմակերպել բռնկումը: Ինչպիսիքները առաջն առնելու ոչ մի միջոց ձեռք չէին առնում: Մայիսի 23—25-ի դէպքերը ցոյց տալիս, որ դա պատահական, անբերական մի բռնկում չէր, ընդհակառակն, նա պատրաստված էր համարեա թէ իր բոլոր մանրամասնութիւններով: Մի քանի մանր փաստեր ապացուցանում են այդ: Օրինակ, չեղիւր թուրքը, որը ամեն առաւօտ շուր էր բերում մի ուսու ընտանիքի համար, մայիսի 23-ին չեկա, և նրան տեսել էին այդ ժամանակ մէջդանում: Մի թուրք, որ լու ծանօթ էր մի ուսու ընտանիքի հետ, խորհուրդ էր տալիս նրան մայիսի 23-ից առաջ ժամանակաւորապէս հեռանալ քաղաքից: Հէնց կոտորածի սկիզբը, որ տեղի ունեցաւ միաժամանակ երեք զանազան տեղերում, ոչինչ կասկած չէ թողնում, որ գոյութիւն ունէր կազմակերպութիւն: Իսկ հայերի համար այդ սկզբնաւորութիւնը կատարելապէս անպատելի էր. ընդհակառակն, մասնագետականների կողմից լինում էին ամենահանգստացուցիչ հաւաստիացումներ խաղաղութեան անհրաժեշտութեան մասին: Հայերը իրանց պրօվօկացիայի անդադար մասնագետներին խորհուրդ էին տալիս միանալ, մասնացոյց անելով այն միտքը, որ բերում է երկու կողմերին փոխադարձ թշնամութիւնը: Յետոյ բանից դուրս եկաւ, որ թուրքերը խաղաղութեան այդ առաջադեմութիւնը բացատրում էին նրանով, թէ հայերը վախենում են թուրքերից:

Մայիսի 23-ին, ցերեկվայ 12 ժամը բոլոր

վարի վրա գտնվող գարնջրատնից դուրս եկաւ հարբած (կամ հարբած ձևացող) թուրքերի մի խմբակ և գնաց դէպի մէջդանը: Հայերի դէմ ուղղված հայոյանքներով: Այստեղ թուրքերից մէկը բէզովէր արձակեց: Հայերը նոյնպէս պատասխանեցին կրակներով: Տեղի ունեցաւ ընդհարում:

Նոյն այդ ժամանակը Ջանգու գետի մօտ կաշգործներին խանութներին առաջ խաղաղ խօսակցում էին մասնագետականները հայ արհեստաւորների հետ: Մասնագետականները մինչև անգամ հաւատացնում էին, որ նրանք ցանկանում են խաղաղ յարաբերութիւններ ունենալ հայերի հետ և նրանց դէմ չեն գնաց մինչև անգամ այն դէպքում, եթէ քաղաքում կոտորած անգամ սկսվէր: Յանկարծ 12 ժամին, կարծես մի աղաւաղանով, նրանք յարձակվում են հայերի վրա, մի քանիսն արկով վերաւորում են խանայններով, երկուսն ապանում են և նրանց դիակները գցում են գետի մէջ: Ընդհարման երրորդ կէտը բուլվարն էր, ուր այդ ժամանակ մօտ 500 հայեր կային: Այստեղ կազմակերպի պաշտպանութեան տակ անցնում էին թուրքերը հատ հատ և մի քանի մարդիկ միասին, գնալով մէջդանի կողմից քաղաքի թուրքական մասը: Ի միջի այլոց անցնում էր մի խումբ եփալիներով, նոյնպէս ոտաւոր ստորաժնիներին պաշտպանութեան տակ: Մի թուրքի մօտ «ստորաժնի» տեսաւ «բերդանկա» և կամենում էր խել նրանից այդ դէմքը, Այն ժամանակ թուրքերը շուտ են գալիս, եփալիները տակից հանում են հրացանները և սկսում են արձակել հայերի կողմը և ապա փախչում են:

Շնորհիւ այն բանի, որ այդ բոլորը անսպասելի էր հայերի համար, նրանք աւելի լուրջ մնան ունեցան, քան մասնագետականները: Հայերից վերաւորված են 20 մարդ, իսկ ըսպանվեցին և վէրքերից մեռան 8 մարդ: *) Այն ինչ մասնագետների կողմից վերաւորված են 2 մարդ: (Պէտք է ասած, որ մասնագետականները ծածկում են իրանց սպանածներին, վախենալով, որ նրանց անդամահատութեան կենթարկեն և ուրիշ շարժառիթներով): Իսկ վերաւորները խուսափում են հեռանալանց գնալուց, որովհետեւ նա գտնվում է քաղաքի հայկական մասում: Բնորոշ է այն, որ այդ օրը հեռանալուց բերվածներից մեծ մասը խանայն վէրքեր ունէին: Դեռ ևս երկու գիշաւորված բանակներ չէին կազմվել, հայերը և թուրքերը մօտ էին միմեանց: Մայիսի 23-ին կոտորածը, կամ «բռնկումը», որպէս անուանում են նրան այստեղ, երկար չը տևեց: Ցերեկվայ 1 ժամին ամեն ինչ արդէն հանգստացաւ: Սկսվեց մասնագետական և հայկական ոյժերի մօրելիքագիտան: Այդ բոլոր անցած գնացածի վրա ոտաւորականութիւնը և զօրքերը կատարելապէս անտարբեր էին նայում, ոչինչ միջոցներ ձեռք չառնելով և չը միջամտելով կոտորածին:

Հետեւեալ օրը առաւօտեան, մայիսի 24-ին, հայերի 19 խանութների վրա գալիս ինչ-որ նշաններ, թէ թուրքական արձանագրութիւններ: Թուրքերը մագաղաններով վրա ամենին այդպիսի բան չը կար: Ոտաւորականները գնաց տեսնելու այդ մագաղանութիւնները, բայց յայտնի չէ ինչ պատճառով: Նախաւորութիւն չը տուեց արտագրել նրա հետ միասին գնացող երգուեալ հաւատարմատար Լևոն Մուշեղեանին, արաբագրութեամբ անցնելով մօտից: Իսկ առաւօտեան հանգստագետի մօտ գնաց մի պատգամաւորութիւն, բաղկացած երկու մասնագետներից (Միբրաւա Միլիբաւան և Փանահ-խան Մահմեդի) և երկու հայից (Յովհաննէս Միլիբանց և Դրիգոր Ամիրեանց): Թուրքերը յայտնեցին նահանգապետին, որ երկվան կոտորածի մէջ, յիշաւ, մեղաւոր են մասնագետականները և որ իրանք համաձայն են յանձնել չորս յանցաւորներին (նրանցից մէկը այն խմբի մէջն էր, որ հրացան էր արձակում մէջդանի վրա): Մի փոքր ժամանակից յետոյ նահանգապետի մօտ եկան այսպէս անուանված «խաղաղացող յանձնաժողով» մի քանի անդամները (**):

*) Տեղեկութիւններ սպանվածների և վերաւորվածների մասին վերջված են պաշտօնական աղբիւրներից (հեռագրացից և ոտաւորականութիւնից):

**) Բանը նրանումն է, որ ընդհարումները հայերի և մասնագետականների մէջ տեղի ունէին դեռ փետրվար ամսին, և վերջացան մի քանի սպանվածներով և վերաւորներով երկու կողմից: Դրանից յետոյ կազմվեց մի յատուկ «խաղաղացող յանձնաժողով», որ բաղկացած էր հաւասարապէս հայերից և մասնագետականներից: Այդ յանձնաժողովը մէջ մտնում են արաբիստ անձնիք: որպէս Բուխարին քաղաքագլխի տեղապահը, սեփական լեզուով Գալիկին վարչապետը, երգուեալ հաւատարմատարը օգնական Լևոն Մուշեղեան և ուրիշները:

Նրանք յայտնեցին, որ հայերը կատարելապէս ոչնչով ապահովված չեն այժմ, որ կոտորածը նորից չի սկսվի, և պահանջում էին, որ թուրքերը տան աղմիկաւորացիային 10 զինաւոր պարագլուխներին և կազմակերպողներին, որոնք յայտնի են համարեա թէ ամբողջ քաղաքին և մեծ ազդեցութիւն են վայելում թուրքերի մէջ: Մասնագետականները հրաժարվեցին կատարել այդ պահանջին:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳՍԱՄԱՌԻՑ

Այս Գ զ ի լ ղ (Գողթան գաւառ).—Այսինքն բաղկացած է 80 ծուխ հայ ընտանիքից, մօտաւորապէս 500 հոգուց, որոնք պարագլուխ են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մեղուաբուծութեամբ: Այս գիւղը մայիսի 15-ին ենթարկվեց թալանի, հրդեհի և կոտորածի: Մայիսի 14-ին հարկբաւոր մարդկանցից բաղկացած թուրք ամբխը յարձակվեց Ալաւնու ոչխարների վրա, բայց ալահեցիները կողմից դիմադրութեան հանդիպելով, թողնում հեռանում են: Փորձում են յարձակվել գիւղի վրա. երբ ներս են մտնում գիւղը ու սկսում են թալանել, մի թեթեւ ընդհարում ունենալուց յետոյ, երբ աւարառուների պարագլուխը (թիւեցի) մահացու վէրք ստանալով վայր է ընկնում, ամբխը գիւղը թողնելով փախչում է: Հետեւեալ օրը հազարաւոր մարդկանցից կազմված կատաղի ամբխը կրկին գիւղի չորս կողմից վայրենի աղաղակներով ներս է խուժում, ամբողջ բնակչութիւնը, մեծ ու փոքր, սարսափած դուրս են փախչում գիւղից: Հրացանների թնդիւնը, մարդկանց աղաղակը, կանանց լաց ու կոծը, սարսափած երեխաների ձիւղ միմեանց խանգվելով, մի զարհուրելի ու սրտաճիւղ տեսարան էր ներկայացնում: Մի քանի ժամից յետոյ մասամբ հանդարտութիւն է տրւում: Ալաւնու բնիկ հայ ժողովուրդը, գիւղից հեռու քաղված, բարձրութեան վրայից դիտում է իր հարազատ օջախի պղծվելն ու աւերվելը, իր արեւն քրտնելով ախառած մալ ու մուլքի յափշտակվելը: Բայց յանկարծ լսելի են լինում եկեղեցու զանգակների յօղանջները. վերս էր նայում և տեսնում, թէ ինչպէս բարձրանում են ծուխը և կրակի բոցերը լափում են թալանած շինութիւնների մնացորդները. երբեմն էլ վայրենի աղաղակներով ձայներ են լսվում, որոնք սպանում են բնաջինջ անել հայերին: Շատերը սարսափած թողնում են իրանց հարազատներին և հեռանում են դէպի մօտակայ հայ գիւղերը Շուռութ (Փարազայտ...) երբ ամենայն ինչ տանում են և համարեա թէ դասարկվում է գիւղը, մօտենում են եկեղեցուն և խփում են, որ դուռը կոտրեն. այդ միջոցին երկու ջերմեանդ հայ չեն դիմանում և ցած գալով՝ միջամտում են, աղաչում—պաղատում են եկեղեցուն ձեռք չը տալ, բայց արեւնաժաւա գաղանները առանց խղճահարմելու կացին հարուածը կրծքերին իջեցնելով վայր են գլորում գետին, դուռը շարքերով ներս են մտնում, պղծում են քրտնոտնական եկեղեցին, կողոպտում են բոլոր սրբազան անօթներն ու զգեստները, վայր բերելով տաճարի վարագոյրը, պատու-պատառ անելով բաժանում են իրար մէջ, շարքում ոչնչացնում են բոլոր ջանքեր և նախատինքն իրաւունքներն ու խաչն ու սկիւր գլխներին դրած պարելով հեռանում են: Արդէն արեգակը մայր էր մտնում, կողոպտիչները աւարը բարձած մեր իսկ ձիւրին, շորիներին և էջերին, բոլոր ապրանքը—ոչխարն գառը, նախիրն ու ու հորթը և այն ամենը, ինչ որ ունէին, առաւելու արած գլորում էին, երբ մի 20—30 հոգի մօտ եկան մեղ և առաջարկեցին կանանցը հետեւել իրանց և գնալ ընդունել խաւովութիւն, բայց կանայք խորշով փախան. թուրքերն այլ ևս չը ստիպեցին տեսելով ձեղ հետ էլ վաղը կը խօսանք: Երբ թուրքերը բոլորովին քաղվեցին գիւղից ու շրջակայից և մուլքը պատուրդ ամբողջ երկիրը, լեռները ու ձորերից ցեր ու ցան եղած թաքնված մեծ ու փոքր իշան, ժողովվեցին գիւղը, մտանք մեր տները. բայց ինչ տուն ինչ տեղ, ամենայն ինչ յափշտակված, կոտորած, մեր կայքի և պատել պաշտպանութեան համար մարտնչող ազնիւ տղա մարդկանց մարմինները թուրք 6-ը այս ու այն կողմը ընկած, կրկին սուգ, կրկին շիւան, ամբողջ գիւղը ժողովված նահատակների շուրջը ողբում է իր մտերիմների կորուստը, ողբում է իր ներկայ գտնու ու անտանելի վիճակը: Բայց քաղաքի լուռութիւնից յետոյ ապուշ-ապուշ միմեանց վրա ենք նայում, մտածում ենք ազատվելու մի հնարք գտնել, բայց անհնարին

սխառեմը բաւարարութիւն տալ այն ծանր պահանջներին, որոնք կարող են դրվել նա ուրախութեամբ «այս» կասէի, բայց դժբաղդաբար, ես հաւատացած եմ, որ «հէ», ՄԻՄԼԱ, 9 յունիսի Հաղորդում են, որ բերեալական կառավարութեան վճիռը Հնդկաստանի զինուորական վարչութեան մէջ բարենորոգումներ մտցնելու վերաբերմամբ՝ այստեղ շատ մեծ սէնսացիա առաջացրեց: Ճշգրիտ աղբիւրից հաղորդում են, որ գեներալ սր էլլիսը, փոխարքայի խորհրդի զինուորական անդամը, հրաժարական է տալիս: Բրտըրիկն ընդունեց նրա հրաժարականը նոյն ամսարով հոկտեմբերի 1-ից:

ՆԱԽԱԳԻՐ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակչին՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻՍԱՆՍԻԱՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱԳԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Գովար, Վորոնոյի արձանի հանդէպ)
Ա մ ե ն օ Ր, բ ա ց ի կ ի ռ ա կ ի օ ի ռ ի ց,
Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը
Ձեռնագիր—9—10 ժ. աղբի. ներքին և ներքալին
Մ. Գ. ԱՌԵՏԻՍԵԱՆՆԻ—10—11 ժ. մարթու, վերաբա
կ վերաբերութիւն:
2. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՆԻ—11—12 ժ. մանկաբարձու
թեան, կանանց և երեխայոց հ.
3. Ի. ԳԶԵՆԻՆԻ—12—1 ժ. ակադէմի, թիւ և կոնդրի
Գ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՆԻ—1—2 ժ. ներքին և երե
խայոց հ.
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՆԻ—1—2 ժ. ներքին և երեխա
յոց հ.
Ա. Գ. ՄԱՆՈՎՈՎ առաջադրու. 9—11 ժ.
ԿԻՆԻՍԻՆԻՆԻՆԻ—1—2 ժ. մանկաբար
ձութեան և կանանց հ.
Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը
Գ. Ա. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՆԻ—7—8 ժ.
Գ. Ա. ԱՐԴԱՆԻՆԻ. Գաւառական միջնորդի
կան և բաղնիքային հետազոտութիւններ:
Օ. Ա. ԱՌԱՎԱՆԻՍԻ—տանը, ծաղկահատ և բժշկ
կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի Համալսարանի (Կոն
սերվուսի) և օպերացիայի համար եռանգնին:
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հի
ւանդներ:
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բ. Կ. Ի.

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԻՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
Ա. Զ. Ի. ՀԻՒՆԴԱՆԻ ԹԻՒՆԻՆԵՐ
Հնդկանիւթիւն ամեն օր.
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյան » 5-ից մինչև 7
Վերամիջօրեակայա փողոց № 8: (Կ. Կ.) 97—100

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Ա. Յ. Քարանեանց
մեկնեց Կովկասի հանքային ջրերը և անցեալ
տարիներին նման այս ամառը ևս կընդունէ
ներքին և ջրային հիւանդութիւն ունեցողներն
ընդ Պետադոբոսկոյում և Էստէնուոկիում մայիսի
17-ից: (Կ. Կ.) 18—20

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Գ. Ա. ՀԱՆՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիսի բժշկական
հիւանդութիւններին, ընդունում է հիւանդնե
րին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյան
6 ժ.—9 ժ.: Կովկաս, Սեմեոնովսկայա փ.: № 20.
(Կ. Կ.) 31—30

Ուշադրութիւն
Շուտով լոյս է ահանելու մի փոքրիկ
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ
Բազուի աղէտներին մասին գրված նկարագրու
թիւններից, որոնք մեծ մասամբ ապագրված
են «Մշակ»-ում: Գրքով կը կրնի 20
կոպէկ, որի օգուտի գումար կ'ըն յատկացվում
է Նսխագրութեան կոմիտեին զոն գնացածների
ընտանիքներին: Հաշտաւորութիւնը կր լինի հաւ
պարակով: Առ այժմ տպելու քանակութիւնը
անորոշ է, որովհետև գումար կը լինեն անհա
ւորութիւններ, սորնք մեծ քանակութեամբ
կը պահանջեն այդ գրքից: Գրքի համար
Գրքի ծանոթներին գրվում 20 տոկոս: Գրքերը
կը վաճառեն ԿԱՆԻՆԻ: Դիմել՝ Թիֆլիս, Թի
ֆոգրաֆիա «Դերմես» Այրապետ Բաբուրյան:

ԱՏԱՄՆԵՐԸ
հանում է, պլումբում է, մարում է և հետա
նում է վ ա տ հոտը: Գր. Մտով. Ծօխլիզ:
Միսայիովսկայա, 108: Գերմանական. եկեղեցու
դիմաց: Զբաղողներին գրվում կը լինի:
(Կ. Կ.) 8—15

Սրանով յայտնում ենք թատերաւեր հա
տարակութեանը, որ մայիսի 14-ին մեր
նշանակած ներկայացումը, որ մենք մեզանից
անկախ պատճառներով յետաձգեցինք, կը կա
յանայ առաջիկայ երեքշաբթի, յունիսի 14-ին
Հաւաքարի Արաքսեանի թատրոնում առանց
փոփոխութեան:
1—1 Դերասան Մ. Աղայեանց

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԱՆՏԱՌԱ
ՅԻՆ ՏՆԱԿ ՄՈՒԾՏԱՅԻՆ ԱՅԳՈՒՄ**
„Պրիւն-Վիլյանուօգրաֆ“
Ամեն կերակի և տօն օրերը ես հնարաւոր
եմ գտել տալ հատարակութեան տեսնել իմ
պատկերները, ուստի և նշանակում եմ բա
ցառապէս ժողովրդական ներկայացումն ժամը
12-ից—5-ը, ամեն մի ժամ, 10 կոպէկ վճա
րով, իսկ ժամը 6-ից 12-ը ամենքի համար
սովորական գներով: Բեղերտութեամբ կան
բազմաթիւ նոր պատկերներ: Երեկոյան ժամը
9-ից հասակաւորների համար կ'օմիկալան և
պիկանտ պատկերներ պարզեան ժանրով ե
րեք մասից:
1—2 Ս. Իվանեցկայա

Կ և ն տ ր օ ն ա կ ա ն
Դրավաճառանոցում վաճառվում են հետեւեալ
գրքերը.
Ահարոնեան Ա. Լուսթիւնը վէպ. Թ. Գ. 60 կ.
ձ.ձ. 20 կ.:
Բեյօրու. Ֆ. Վ. Թափառական բուրդար. Թաթ.
Ն. Զաւ. Նալբանդեան, Ալեքսանդրով.
Գ. 30 կ., ձ.ձ. 15 կ.:
Լեօ. Մէլքի աղջիկը: Թ. Գ. 1 ր. 50 կ. ձ.ձ.
40 կ.:
Հաւաքածուեան Հ. Անհունի էջերում. Ս. Գ.
Գ. 60 կ. ձ.ձ. 20 կ.:
Մանեգագա Պ. Հիւանդ Մէր, առողջապահ
կան վէպ. Թաթ. Ա. Գ. Դ. Ն. Ալեք
սանդրով. Գ. 40 կ. ձ.ձ. 20 կ.:
Միլի-Հալիպեան Հ. Մի պոյոյոյ ճապոնում.
Թ. Գ. 40 կ. ձ.ձ. 15 կ.:
Միլի-Մայեան. Մի բուրդ (պատկեր Բալա
խանու կանցից) Թ. Գ. 3 ձ.ձ. 9 կ.:
Փափագեան Վ. Երկու Թռչուն: Թ. Գ. 3 կ.
ձ.ձ. 9 կ.:
Քամալեան Ս. Մերիլ Հերոս Հասան խանի
ժամանակի պատմութիւն. Թ. Գ. 25 կ.
ձ.ձ. 15 կ.:
Ֆրանց Հոֆման. Աշխատաւորը որդեք. Թաթ.
օր. Մ. Շաքորեան. Վ. Գ. 25 կ. ձ.ձ.
15 կ.:
Օտար քաղաքներից պահանջողները պէտք է
գրքերի արժէքը և ձ.ձ. կանխիկ ուղարկեն,
միանուագ մի քանի գիրք պահանջող ձ.ձ.
ստանալու միջոցին է վճարում:
Դիմել Թիֆլիս. Центральную книжную Тор
говлю. (2) 1—2

Հարկաւոր է
փայտի պահեստի համար մի
Գ Ա Ն Ձ Ա Պ Ա Հ
ամսական ոռճիկ 20 րուբլի, ճաշ և բնակարան:
Դիմել. Ногайскъ (Тавр. губ.) Н. Черче
нову. (2 Կ.) 1—2

Գուտտենբերգ
Դրախտութեամբ վաճառվում են
Սիպիլի. Տոլքեր, 50 կ.:
Абраменко. Словариеъ заключающій около
7000 словъ, 10 ր.:
Փափագեանի. պատմութեանը թիւրքալայերի
կեանքից. 1 ր.:
Փառնակեան. Սոլերա, վոզբլի մէկ արարուա
ծով. 40 կ.:
Այվազեանի. Անիի կործանումը պատմական
վէպ ա. մաս. 70 կ.:
Մուրացեանի. Երկարութիւնները I մ. 1 ր.
50 կ.:
Քամալեանի. Մերիլ հերոս հասան խանի ժա
մանակի պատմութիւնը. 25 կ.:
» Սուլ Սալիկ. 25 կ.:
Միլի-Հալիպեանի. Մի պոյոյոյ ճապոնում իմ
յուշերից և տպաւորութիւններից. 40 կ.:
» Բնչպէս պահպանվել խօլերայից 5 կ.
» Հայաստանի լուսաւորիչ ա. Դրի
գոր. 8 կ.:
» Առաջին լուսաւորիչներ ա. Թա
ղեսու և Բարդուղիմէոս. 5 կ.:
Քամալ. Պարեան-Դանադոզ. 5 կ.:
» Ուրբիլ գերեզմանի վրա առանց
արտասուքի են լաց լինում. 10 կ.:
» Հայր և սրբիկ. 5 կ.:
Новѣйшая практическая и упрощенная метода
Кройки платьевъ и другихъ нарядовъ
дамскихъ и дѣтскихъ, Глозинскаго. 7 ր.:
Բաւազեան Կ. Անիի յիշատակ. 22 պատկե
րով և Անիի յատակագծով. 1 ր.:
Դիմել՝ Թիֆլիս, книжн.-магазинъ «Гуттен
бергъ, Г. Галустьян. 1—2

Շէգրիկի վերադառնալով հայրենիք, խնդ
րում եմ ինձ հետ գործ ունեցողներին այ
սուկեան բարեհաճն հիմել ԱХАЛКАКИ, Ка
заросу Теръ-Григорьянцу.
1—2 Զաւարեցի

Հ յ Ս ա ե ս ա լ
Լ Է Օ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
Երոզ հասարակ (1878—1892)
Երեք հատորի գինն է 4 րուբլի:
Խնդրում ենք այն բաժանորդներին, որոնք փոխել են իրանց բնակութեան տեղը շտա
պեն հաղորդել իրանց նոր հասցէները:
Դիմել Թիֆլիս գրավաճառներին:

ԼՅՈՍ ՏԵՍԱԻ «ՄՈՒՐԸ» ԱՄՍՍԱԳՐԻ № 6-րդը.—ԲՈՎԱՆԻՍԿՈՒԹԻՒՆ
1. Ստարչիւն (պատկերներ գեղարդ), Վ. Փափագեանի, 2. Ջոնա, պատմութեանը թիւրքա
լայերի, 3. Կը զայ գարունն ոտան., Սմառա Իւզըպեանի, 4. Մ. Պէշիկթաշլեան, Ար
շակ Զօպանեանի, 5. Ուրմիայից—Սոյ, Գալուստի, 6. Զանապարհորդութիւն թիւրքաց թիւրգ.,
(Վանից—Շէկդիլեան) Կ—ցիլի, 7. Ռ. Պատկանեանի նամակները, 8. Թիւրքիւն և Ներսիսեան,
Զէյնա Բայսի, 9. Թիւրքիւն ֆինանսները, Ռուբին Բերեբեանի, 10. Մեր դժբախտութիւնը,
պատմութեանը Տիկ. Նիկ. Բահաթուրի, 11. Դասակարգերը ժամանակ. Լորոյ. հասարակ. մէջ
Ս. Շ. Ի. 12. Օրբիլեանները, վէպ Րոնէ Բաղլեանի, 13. Ներկայ ճապոնը Միշլի Ռիւլեանի, 14. Բնա
դատութիւն և մատենախօսութիւն.—1) Միւսանթ. «Հայ որդիները».—Տ. Զ. 2) Հեղինէ
Միլի-Հալիպեան, «Մի պոյոյոյ ճապոնում».—Չ. 3) Մ. Սերաօ, «Մանկան մօտ».—«Վերջին
խօսք».—Ս. 15. Նոր ստացուած գրքեր, 16. Թուրք մամուլը. Տ. Զաւարեան, 17. Գեղարուեստի
աշխարհից.—Համառօտ տեսութիւն գեղարուեստական դպրոցներու, սկզբէն մինչև նորագոյն
շրջանները, Հ. Ալեանաբի:
18. Ներքին տեսութիւն.—Երևանի նահանգի անցքերը.—Համալսարանի ծրագիր և նրա
իրագործման նպատակը հանգամանքները.—Հայ գիւղացիների կրած ֆեոդալի մօտաւոր
չափերը.—Դիմուքներ Կովկասեան փոխարքային.—Տրեպովին տուած լիազօրութիւնները.—
Երկրագործութեան միջոցաւորութեան խափանումը.—Կարապետ Եղեան: Լ. Ս.:
19. Արտաքին տեսութիւն.—Ռուսաց նաւատորմերի ջախջախումը.—Դերմանիւն աղա
տուած ձեռներով.—Շվեդ. Նորվեգիական ընդհարում: Լ. Ս., 20. Վերապահներ, 21. Յայտարա
րութիւններ, 22. Յաւելուած. Զէյնա Մորիլը «Հալի Բաբան Աղլիայում», վէպ պարսկ.
կեանքից, Թաթ. աղբ. Մ. Կարապետեան: 33—64

Դ Է Պ Օ
ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Երբ. Յակոբ Յանեանցներ եւ Մարգարեանց“
Պատրաստի հազուադէպի խանութում (Միշլիպեան կամուրջ, Գալուստի տուն №
25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների
համար ամենալիւրջին ամսական սեզօնի տարազով պատրաստած հազուադէպ:
Գները չափաւոր են և առանց սակարկութեան:
(2. Կ.) 48—100

Հ Ր Ա Ի Է Ր
Վրաստանի հայոց վիճակային կոնսուլատ
փայտի տարւոյ մայիսի 27-ի համարաւ 2502
թիւով խանութեան համաձայն՝ յունիսի 12-ին,
կիրակի առաւօտեան 12 ժամին, Կ. Թիւրքիւն և
Գէորգ Եղեղեցիում լինելու է ծխականաց ժո
ղով նոր երէկոյան ընտրելու. և այս իսկ
առթիւ պատիւ ունեն հրաւիրել մեծ. պ. պ.
ծխերին որդեկալ օրն ու ժամը ներկայ լի
նել յիշեալ եկեղեցումը ընտրութեանը մաս
նակցելու:
Գործակալ առաջին մասին Տիֆլիսի
Դրիգոր աւագ քահանայ Մանգիւկեանի
2—3

ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒՀԻ
Սօֆիա Ի. Գեորգիտով-Լօկ
Տեղափոխվել է Կազանի յայտնի փողոց № 7,
տուն իշի. Թուսանովայի, Ալեքսանդրեան ալ
գու դիմացը: (Կ. Կ.) 2—100

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնագործութեան ընկերութեան
**ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵՐԵԻ, ԿԱ
ՆԱՆՏ, ՏՂԱՄԱՐԿԱՆ ՏԵԿՆԻԿԱՆԵՐԻ**
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրիսօղներ ու սանդալներ
կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդր
կովկասի միւս քաղաքներում ԱՄՆԱԼԱԻ
վաճառատներում.
ՓԱԲՐԻՈՆԵ ԿԼԵՅՄՕ
С ПЕТЕРБУРГА
Խնդրվում է ուշը դարձնել
Ֆաբրիկայի նշանի վրա:
Խոշոր չափերով վաճառումը կատարում է «Լէօպօլդ Նէյշլէր» առևտրական
տունը Երևանեան հրապարակու. հեռախօս № 346: Նոյն տեղում կայ մեծ
քանակութեամբ ԿԱՇԻԿՆԵՐ ԱՊՐԱՆԻՆԵՐ առևտրական և արտասահմանեան: